ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«26» «մարտի» 2024 թ. № 93-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 135-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 9-րդ և 20-րդ ենթակետերը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի և էկոպարեկային ծառայության գործունեության համակարգման հետևյալ բաշխումը.

1) շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյան.

ա. իրավաբանական վարչություն,

բ. ռազմավարական քաղաքականության վարչություն,

գ. միջազգային համագործակցության վարչություն,

դ. բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն,

ե. հասարակայնության հետ կապերի բաժին,

զ. առաջին բաժին,

է. Էկոպարեկային ծառայություն,

ը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

թ. «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժ. «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժա. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժբ.«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժգ. «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժդ. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժե. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժզ.«Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

2) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյան.

ա. անտառային քաղաքականության վարչություն,

բ. ջրային քաղաքականության վարչություն,

գ. վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն,

դ. կլիմայական քաղաքականության վարչություն,

ե. մթնոլորտային քաղաքականության վարչություն,

զ. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ,

3) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան.

ա. հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն,

բ. թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն,

գ. ջրային ռեսուրսների կառավարման վարչություն,

դ. կենսառեսուրսների կառավարման վարչություն,

ե. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

զ. «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

4) շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյան.

ա. ֆինանսատնտեսական վարչություն,

բ. քարտուղարություն,

գ. մարդկային ռեսուրսների կառավարման բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի ապրիլի 27-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, անտառային կոմիտեի, համակարգի պետական ոչ առեվտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հունիսի 27-ի N 209-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 135-Լ հրամանը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/26/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«26» մարտի 2024թ.

ք. Երևան